կենդրոնական գիւղերում, որ գիւղացոց բերքերը նա արտահանէր և ձեռնտու պայմաններով վաճառէր նշանաւոր քաղաքների շուկաներում, իսկ իրենց գիւղացոց անհրաժեշտ պէտքերը ինքը հոգար՝ տալով նրանց արժան գնով։ Հինգերորդ՝ հիմնել գիւղերում հասարակական շտեմարաններ և երկրի բոլոր բերքերից որոշ տոկոս յետաձգել այդ ամբարների մէջ։ Ապա անբերրիութեան ատեն վաճառել ամբարուած բերքերը և այդ վա-

---

շահեկան յօդուածներով մի առ մի ցոյց է տալիս, թէ ինչպէս և ինչպիսի եղանակով կարելի է կազմակերպել «սպառող» և «արտադրող» ընկերութիւններ մեր Հայ գիւղերում։ Հաստատ փաստերով նա ապացուցանում է, որ այդպիսի օգտակար ընկերութիւնները մեծ բարեփոխութիւն և անգին յեղաշրջումն առաջ կբերեն մեր գիւղական թմրած և յետ մնացած Հայ ժողովրդի մէջ։ Նա խորհուրդ է տալիս գիւղի հասկացող երիտասարդներին, որ ժողովրդի գլուխ անցնեն և սկսեն գործել։ Բայց տողերիս գրողը գիւղացու գաւակ լինելով, նա շատ լաւ ծանօթ է թէ գիւղացու դաշտն վշտերի ու անհուն ցաւերի և թէ ամեն մի օգտակար գործ սկսելիս՝ խոչընդոտ եղող և արգելք հանդիսացող «Ծատուր Բիսմարկներին» խափանիչ գոյ ծողութեանց հետ։ Ուստի համարձակւում եմ ասել, որ «Օգտակար կազմակերպութիւններ» սկսել մեր Հայ գիւղերում, տեղական անապատրաստ և անձեռնհաս մարդկանց ձեռքով, կնշանակէ տուն շինել աւազի վրայ։ Իմ համեստ կարծիքով, այդպիսի «Օգտակար կազմակերպութիւններ» ձեռնարկելու համար գործը յաջող և հաստատ հիմքերի վրայ դրուած կլինի միայն այն ատեն, երբոր ձեռնարկողները և վերահսկողները կլինին դրսից եկած բանիմաց, բարեխիղճ, բարեբարոյ, խելքի, մտքի և տպաւորող լեզուի տէր և բուռն եռանդով գործող մարդիկ։